ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2025 թվականի № 11

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 14.03.2019Թ. ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 06.09.2016Թ. ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Սահմանել կուրսային աշխատանքի պատրաստման և պաշտպանության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի՝ 14.03.2019թ. հաստատված կուրսային աշխատանքի պատրաստման և պաշտպանության կարգի և ՀՀ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի՝ 06.09.2016թ. հաստատված ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման կարգի մասին որոշումները: :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
թ. № 11 որոշման

Կ Ա Ր Գ
ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կուրսային աշխատանքը կրթահամալիրի սովորողների ուսումնառության կարևոր բաղադրիչներից է: Այն իրենից ներկայացնում է ուսումնահետազոտական աշխատանք, որի կատարումը սովորողից պահանջում է գիտելիքների որոշակի պաշար և նպաստում է նրա մասնագիտական հմտությունների ձևավորմանը:
2. Կուրսային աշխատանքները կատարվում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից (մոդուլներից)՝ համապատասխան կիսամյակներում:
3. Կուրսային աշխատանքի կատարման նպատակն է՝
1) սովորողների գիտելիքների և մասնագիտական կարողությունների խորացումը և կատարելագործումը,
2) սովորողների մոտ ինքնուրույն ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կատարման կարողությունների ձևավորումը,
3) ժամանակակից տեխնոլոգիաների, տեղեկատվական նյութերի մշակման, վերլուծության և կիրառման կարողությունների և հմտությունների ձևավորումը,
4) հետազոտությունների արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ստացված արդյունքների հիման վրա հետևությունների և առաջարկների ձևակերպման կարողությունների ձևավորումը:

2. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4. Կուրսային աշխատանքի թեման պետք է համապատասխանի տվյալ մասնագիտության կրթական վերջնարդյունքներին:
5. Համապատասխան ամբիոնը կազմում և տվյալ կիսամյակի ամբիոնի առաջին նիստում հաստատում է կուրսային աշխատանքի թեմաների ցանկը՝ հստակ ձևակերպված վերնագրերով, հաշվի առնելով սովորողների քանակը: Կուրսային աշխատանքների թեմաները կարող են փոփոխվել, արդիականացվել և լրացվել յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով տվյալ գիտության զարգացման առանձնահատկությունները:
6. Կուրսային աշխատանքի թեման ուսանողին հանձնարարվում է տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքները սկսելուց 15 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

7. Կուրսային աշխատանքի կատարման վերահսկողությունն իրականացնում է աշխատանքի ղեկավարը:

8. Առկա ուսուցման սովորողը պարտավոր է կուրսային աշխատանքը կազմված վիճակում հանձնել ամբիոն թեման հանձնարարելուց ոչ ուշ քան 2 ամսվա ընթացքում, իսկ հեռակա ուսուցման սովորողը՝ կուրսային աշխատանքի պաշտպանության կիսամյակի ուսումնաքննական հավաքը սկսելուց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Ղեկավարը պարտավոր է ստուգել սովորողի կողմից ներկայացված կուրսային աշխատանքը և ստուգման արդյունքներով աշխատանքի տիտղոսաթերթի վրա ամրագրել աշխատանքը պաշտպանության երաշխավորելու (կամ չերաշխավորելու) իր պատճառաբանված որոշումը:

10. Կուրսային աշխատանքը պաշտպանության չերաշխավորելու դեպքում ղեկավարը մատնանշում է կոնկրետ թերությունները և սահմանում է դրանք վերացնելու ժամնկետը: Այդ ժամկետը որոշելիս հաշվի է առնվում թերությունների բովանդակությունը և քանակը, սակայն բոլոր դեպքերում սովորողը թերությունները վերացնելուց հետո կուրսային աշխատանքը ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

11. Կուրսային աշխատանքը ղեկավարի կողմից կարող է թերությունները վերացնելու համար վերադարձվել սովորողին ամեն անգամ, երբ ղեկավարի համոզմամբ այդ թերությունները էականորեն ազդում են կուրսային աշխատանքի բովանդակության կամ ձևավորման վրա:

12. Կուրսային աշխատանքի պաշտպանության թույլատրվում են այն սովորողները, որոնք սահմանված ժամկետում թողարկող ամբիոն են ներկայացրել սույն կարգի պահանջներին համապատասխանող աշխատանք:

13. Կուրսային աշխատանքի պաշտպանության ժամանակ սովորողին ելույթի համար տրվում է 10-15 րոպե: Սովորողի ելույթը պետք է պարունակի տեղեկություններ՝ աշխատանքի թեմայի, դրա արդիականության հիմնավորման, ստացած արդյունքների և եզրակացությունների մասին: Սովորողի ելույթից հետո նրան կարող են տրվել հարցեր կուրսային աշխատանքի թեմայի շրջանակներում:

14. Կուրսային աշխատանքը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով, հաշվի առնելով գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

№	**Չափանիշը**	**Առավելագույն միավորը**
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականության հիմնավորումը	2
Ընդամենը՝		**20**

15. Վերջնական գնահատականը գրանցվում է տեղեկագրում, սովորողի ստուգման գրքույկում, ինչպես նաև կուրսային աշխատանքի տիտղոսաթերթի վրա և հաստատվում է ղեկավարի ստորագրությամբ: Կուրսային աշխատանքները պահպանվում են մինչև ուսանողի ուսումնառության ավարտը: Պահպանման ժամկետը լրանալուց հետո աշխատանքներն ակտավորվում և դուրս են գրվում:

16. Սույն կարգով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված, անբավարար գնահատականի արժանացած կամ չներկայացված կուրսային աշխատանքը համարվում է ակադեմիական պարտք:

17. Կուրսային աշխատանքը վերահանձնելու համար սովորողը պարտավոր է ոչ ուշ, քան վերահանձնման նշանակված օրվանից 5 աշխատանքային օր առաջ ղեկավարին ներկայացնել նույն թեմայով կուրսային աշխատանքը:

4. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

18. Կուրսային աշխատանքի ղեկավարներին նշանակում է ամբիոնի պետը;

19. Ղեկավարի գործառույթներն են՝

1) խորհրդատվության տրամադրում կուրսային աշխատանքի բովանդակության մշակման հարցում,

2) աջակցության տրամադրում աշխատանքի նպատակի, խնդիրների, հետազոտության առարկայի գրագետ և հստակ ձևակերպման հարցում,

3) աջակցություն հետազոտության մեթոդիկայի ընտրության գործում,

4) օգնություն գրականության ընտրության գործում,

5) կուրսային աշխատանքի գնահատում:

5. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

20. Կուրսային աշխատանքը կատարելիս սովորողը պարտավոր է՝

1) պահպանել աշխատանքի կատարման և ամբիոն ներկայացնելու ժամկետները,

2) կատարել ղեկավարի առաջադրանքները, հաշվետու լինել նրան աշխատանքի կատարման ընթացքի մասին,

3) ցուցաբերել ինքնուրույնություն թեմային վերաբերող գրականության ընտրության և վերլուծության հարցում:

21. Կուրսային աշխատանքի կատարման ընթացքը բաղկացած է հետևյալ փոխկապակցված փուլերից՝

1) ղեկավարի նշանակում,

2) կուրսային աշխատանքի թեմայի հաստատում,

3) կուրսային աշխատանքի բովանդակության համաձայնեցում ղեկավարի հետ,

4) գրականության որոնում կուրսային աշխատանքի թեմայով,

5) տեսական նյութերի վերլուծություն և ամփոփում, գրականության վերլուծություն,

6) կուրսային աշխատանքի ներկայացում ղեկավարին,

7) ղեկավարի կողմից կուրսային աշխատանքի ստուգում, թերությունների մատնանշում,

8) սովորողի կողմից ղեկավարի մատնանշած թերությունների վերացում,

9) կուրսային աշխատանքի վերջնական տարբերակի կազմում և հանձնում ամբիոն,

10) կուրսային աշխատանքի պաշտպանություն և գնահատում:

6. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Կուրսային աշխատանքի ձևավորումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից, վերևից և ներքևից՝ 2.0 սմ,

2) նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին, 25-30 թերթ ծավալով,

3) տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ՝ հայերեն տեքստերի դեպքում՝ GHEA Grapalat կամ GHEA Mariam, իսկ ռուսերեն և անգլերեն տեքստերի դեպքում՝ Times New Roman,

4) վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5,

5)հարցերի վերնագրերը գրվում են **թավ (bold),** մեջտեղից և գլխատառերով,

6) յուրաքանչյուր հարց սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ աջ կողմից: Համարակալումը սկսվում է առաջին էջից, որը սակայն չի համարակալվում :

23. Հղումները գրվում են 10 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1: Հղումները ներառում են հետևյալ տվյալները՝ աշխատության հեղինակի ազգանունն ամբողջությամբ, անվան և հայրանվան առաջին տառերը, աշխատության լրիվ անվանումը, տպագրության վայրը, տպագրության տարին, այն էջերի հերթական համարները, որտեղ հանդիպում է մեջբերված տեքստը (օր.՝ Պողոսյան Պ.Պ. Իրավագիտություն: Երևան, 2014: էջ 26-27:): Եթե հղում է կատարվում գիտական հոդվածների ժողովածուին կամ ամսագրին, ապա այն ունենում է հետևյալ տեսքը՝ հեղինակի ազգանունն ամբողջությամբ, անվան և հայրանվան առաջին տառերը, հոդվածի լրիվ անվանումը, ժողովածուի կամ ամսագրի անվանումը, գիտական հանդեսի կամ ամսագրի հերթական և ընդհանուր համարը, տպագրության տարին, այն էջերի հերթական համարները, որտեղ հանդիպում է մեջբերված տեքստը (օր.՝ Պողոսյան Պ.Պ. Ապացուցման հիմնահարցերը քրեական դատավարությունում // Իրավագիտության հարցեր: № 13 (79), 2014: էջ 26-27:): Ինտերնետային կայքին հղում կատարելիս ինտերնետ-հասցեն նշվում է ամբողջությամբ: Օր.՝ URL:https://www.e-gov.am/u_files/arc_voroshum/Mar9-6_1.pdf., փակագծերում նշելով վերջին այցելության ամսաթիվը:

24. Կուրսային աշխատանքը պետք է ունենա՝

1) տիտղոսաթերթ (Ձև 1),

2) բովանդակություն (Ձև 2),

3) նախաբան,

4) հիմնական մաս,

5) վերջաբան,

6) գրականության ցանկ,

7) անհրաժեշտության դեպքում նաև հավելվածներ:

25. Ներածությունը պետք է պարունակի թեմայի արդիականության հիմնավորումը, աշխատանքի նպատակի և խնդիրների ձևակերպումը, հետազոտության առարկայի նկարագրությունը և տեղեկություններ աշխատանքի կառուցվածքի մասին:

26. Աշխատանքի հիմնական մասը, որպես կանոն, բաժանվում է 2-4 հարցերի, որոնք պետք է ավարտվեն հեղինակի եզրակացություններով:

27. Աշխատանքի վերջաբանը պետք է պարունակի ուսումնասիրության հիման վրա կատարված եզրակացությունները:

28. Օգտագործված գրականության ցանկում պետք է նշվեն աշխատանքի կատարման ընթացքում մեջբերված նորմատիվ իրավական ակտերը, տեսական աղբյուրները և էմպիրիկ նյութերը:

Ձև 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

_____*ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ*

_____ *ԱՄԲԻՈՆ*

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«----------» առարկայից

Թեմա՝ ----------

Կատարող՝ ---------- ուսումնական ստորաբաժանման «----------» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի առկա անվճար ուսուցման սովորող, Պ.Պողոսյան

Ղեկավար՝ ---------- ամբիոնի դոցենտ, ի.գ.թ., Ա.Մելիքսեթյան

ԵՐԵՎԱՆ 2025

Ձև 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....էջ 2
1. ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... էջ 4
2. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՀԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ.....էջ 12
3. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՀԵԼՈՒ ԾԱՆՐԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.....էջ 19
ՎԵՐՋԱԲԱՆ..... էջ 24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....էջ 26